ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ՄԱԾՁԲ-22/223

ք.Երևան «12» դեկտեմբերի 2022թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի ժ/պ Ի. Օսիպյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ–ն, ի դեմս տնօրեն Ռ. Տեր-Գալստյանի, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Ամանորին և Սուրբծննդյան տոներին նվիրված մշակութային միջոցառումների շրջանակում, Երևանի հիմնադրման 2750-ամյակին նվիրված շատրվանների պուրակի տարածքում 2022 թվականի դեկտեմբերի 5-ից 2023 թվականի հունվարի 6-ը ներառյալ մշակութային միջոցառումների անցկացման վայրի թեմատիկ-գեղարվեստական ձևավորման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **115900000 (հարյուր տասնհինգ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ,** ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև **115900000 (հարյուր տասնհինգ միլիոն ինը հարյուր հազար)** ՀՀ դրամը Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում :

7.11 Սույն պայմանագիրը կազմված է -13- էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչությունը:

7.14 ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածի 2-րդ մասի հիմքով, սույն պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրը կնքելը ծագած հարաբերությունների նկատմամբ, 2022 թվականի նոյեմբերի 1-ից:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտի փ. 1	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սասնա Ծռեր 2/198
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝ Էվոկաբանկ ՓԲԸ
ՀՀ 900012410537	ՀՎ 1660004718200100
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 00167818
Ի. Օսիպյան _____	Ռ. Տեր-Գալստյան _____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
12 դեկտեմբերի 2022թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-22/223
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

չ/հ	(CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
		Ամանորին և Սուրբծննդյան տոներին նվիրված մշակութային միջոցառումների շրջանակում, Երևանի հիմնադրման 2750-ամյակին նվիրված շատրվանների պուրակի տարածքում 2022 թվականի դեկտեմբերի 5-ից 2023 թվականի հունվարի 6-ը ներառյալ անհրաժեշտ է իրականացնել մշակութային միջոցառումների անցկացման վայրի թեմատիկ-գեղարվեստական ձևավորման ծառայությունները, որն իր մեջ ներառում է. • Հանրապետության հրապարակի և Երևանի հիմնադրման 2750-ամյակին նվիրված շատրվանների պուրակն իրար կապող մետաղական կամուրջի գեղարվեստական լուսավորության մոնտաժում, գործարկում և ապամոնտաժում • Երևանի հիմնադրման 2750-ամյակին նվիրված շատրվանների պուրակում գեղարվեստական-լուսային ձևավորման ապահովում • Շահումյան պուրակի ծառերի առնվազն 30000 գծամետր դեկորատիվ լուսավորության մոնտաժում և ապամոնտաժում՝ ներառյալ մալուխները և մոնտաժային նյութերը:					
1	79951110/585	• Թվով 11 հատ ծառերից կախվող դեկորատիվ ջահերի մոնտաժում և ապամոնտաժում՝ ներառյալ մալուխները և մոնտաժային նյութերը: • Ջահերից 5 հատի բարձրությունը 1,5 մետր, իսկ 6 ջահերի բարձրությունը՝ 1 մետր:	դրամ	115900000	1	ք. Երևան	մինչև 2023 թվականի հունվարի 6-ը
		• Թվով 1 հատ 4500X1000X6000 մմ չափի դեկորատիվ կամար, որի հիմքը պետք է լինի 25X25 մմ մետաղական քառանկյուն խողովակներից: Կողային հատվածները 3 մմ հաստությամբ հայելապատ օրգանական ապակիով երեսպատված: Ճակատային հատվածները տոնածառի խաղալիքներով և լույսերով զարդարված: • Շատրվան 1. ✓ Թվով 1 հատ «Սատանու անիվ» կարուսել H=3000 մմ: Կարուսելի հիմքը պետք է պատրաստված լինի 40X40 մմ մետաղական քառանկյուն խողովակներից: Կարուսելը պետք լինի պտտվող մեխանիզմով, երեսպատված ՊՎԽ-ով և ոսկեգույն հայելապատ օրգանական և լուսադիոդային լուսավորությամբ լուսավորված: ✓ Թվով 1 հատ «Սատանու անիվ» կարուսել H=1700 մմ: Կարուսելի հիմքը պետք է պատրաստված լինի 40X40 մմ մետաղական քառանկյուն խողովակներից:					

		Կարուսելը պետք լինի պտտվող մեխանիզմով, երեսպատված ՊՎԽ-ով և ոսկեգույն հայելապատ օրգանական և լուսադիոդային լուսավորությամբ լուսավորված: ✓ Թվով 5 հատ եռնանկյունաձև դեկորացիա H=1000 մմ : Հիմքը 20X20 մմ մետաղական քառանկյուն խողովակներից: Եզրագիծը դեկորատիվ լուսավորությամբ: ✓ Թվով 1 հատ եռնանկյունաձև դեկորացիա H=1200 մմ : Հիմքը 20X20 մմ մետաղական քառանկյուն խողովակներից: Եզրագիծը դեկորատիվ լուսավորությամբ: ✓ Թվով 2 հատ եռնանկյունաձև դեկորացիա H=1300 մմ : Հիմքը 20X20 մմ մետաղական քառանկյուն խողովակներից: Եզրագիծը դեկորատիվ լուսավորությամբ: ✓ Թվով 1 հատ եռնանկյունաձև դեկորացիա H=1700 մմ : Հիմքը 20X20 մմ մետաղական քառանկյուն խողովակներից: Եզրագիծը դեկորատիվ լուսավորությամբ: ✓ Թվով 3 հատ եռնանկյունաձև դեկորացիա H=1000 մմ: Հիմքը և երեսպատումը 8 մմ հաստությամբ բարձրորակ ներյանյութով մշակված ՊՎԽ-ով: ✓ Թվով 2 հատ եռնանկյունաձև դեկորացիա H=1200 մմ: Հիմքը և երեսպատումը 8 մմ հաստությամբ բարձրորակ ներյանյութով մշակված ՊՎԽ-ով: ✓ Թվով 1 հատ եռնանկյունաձև դեկորացիա H=1300 մմ: Հիմքը և երեսպատումը 8 մմ հաստությամբ բարձրորակ ներյանյութով մշակված ՊՎԽ-ով: ✓ Թվով 1 հատ եռնանկյունաձև դեկորացիա H=1700 մմ: Հիմքը և երեսպատումը 8 մմ հաստությամբ բարձրորակ ներյանյութով մշակված ՊՎԽ-ով: ✓ Թվով 3 հատ եռնանկյունաձև դեկորացիա H=1500 մմ: Հիմքը և երեսպատումը 8 մմ հաստությամբ բարձրորակ ներյանյութով մշակված ՊՎԽ-ով: ✓ Թվով 2 հատ եռնանկյունաձև դեկորացիա H=2000 մմ: Հիմքը և երեսպատումը 8 մմ հաստությամբ բարձրորակ ներյանյութով մշակված ՊՎԽ-ով: ✓ Թվով 4 հատ 800X800 մմ չափի դեկորատիվ տուփեր: Դեկորատիվ տուփերը ինքնակպչուն թաղանթով պատված 8 մմ հաստությամբ ՊՎԽ-ից: Դեկորատիվ բանտը՝ 3 մմ հաստությամբ հայելապատ օրգանական ապակուց: ✓ Թվով 1 հատ 600X600 մմ չափի դեկորատիվ տուփեր: Դեկորատիվ տուփերը ինքնակպչուն թաղանթով պատված 8 մմ հաստությամբ ՊՎԽ-ից: Դեկորատիվ բանտը՝ 3 մմ հաստությամբ հայելապատ օրգանական ապակուց: ✓ Թվով 5 հատ 500X500 մմ չափի դեկորատիվ տուփեր: Դեկորատիվ տուփերը ինքնակպչուն թաղանթով պատված 8 մմ հաստությամբ ՊՎԽ-ից: Դեկորատիվ բանտը՝ 3 մմ հաստությամբ հայելապատ օրգանական ապակուց: ✓ Թվով 1 հատ 450X450 մմ չափի դեկորատիվ տուփեր: Դեկորատիվ տուփերը ինքնակպչուն թաղանթով պատված 8 մմ հաստությամբ ՊՎԽ-ից: Դեկորատիվ բանտը՝ 3 մմ հաստությամբ հայելապատ օրգանական ապակուց:					

		✓ Թվով 5 հատ 350X350 մմ չափի դեկորատիվ տուփեր: Դեկորատիվ տուփերը ինքնակպչուն թաղանթով պատված 8 մմ հաստությամբ ՊՎԽ-ից: Դեկորատիվ բանտը՝ 3 մմ հաստությամբ հայելապատ օրգանական ապակուց: ✓ Թվով 7 հատ 300X300 մմ չափի դեկորատիվ տուփեր: Դեկորատիվ տուփերը ինքնակպչուն թաղանթով պատված 8 մմ հաստությամբ ՊՎԽ-ից: Դեկորատիվ բանտը՝ 3 մմ հաստությամբ հայելապատ օրգանական ապակուց: ✓ Թվով 8 հատ 250X250 մմ չափի դեկորատիվ տուփեր: Դեկորատիվ տուփերը ինքնակպչուն թաղանթով պատված 8 մմ հաստությամբ ՊՎԽ-ից: Դեկորատիվ բանտը՝ 3 մմ հաստությամբ հայելապատ օրգանական ապակուց: ✓ Թվով 3 հատ 200X200 մմ չափի դեկորատիվ տուփեր: Դեկորատիվ տուփերը ինքնակպչուն թաղանթով պատված 8 մմ հաստությամբ ՊՎԽ-ից: Դեկորատիվ բանտը՝ 3 մմ հաստությամբ հայելապատ օրգանական ապակուց: ✓ Շուրջ 25 գծամետր 3 մմ հաստությամբ հայելապատ օրգանական ապակիով քողարկում: ✓ Շատրվանների խողովակների մշակում և ներկում ոսկեգույն ներկանյութով: • Շատրվան 2. ✓ Թվով 2 հատ դեկորատիվ եղնիկներ H=1700 մմ: Դեկորատիվ եղնիկերի հիմքը 40X20 մմ քառանկյու մետաղական խողովակներից: Եղնիկները երսպատված են բետոնապատ պենոպլաստով, էպոքսիդով, ներկանյութով և այլն: ✓ Թվով 2 հատ դեկորատիվ եղնիկներ H=2800 մմ: Դեկորատիվ եղնիկերի հիմքը 40X20 մմ քառանկյու մետաղական խողովակներից: Եղնիկները երսպատված են բետոնապատ պենոպլաստով, էպոքսիդով, ներկանյութով և այլն: ✓ Թվով 2 հատ դեկորատիվ եղնիկներ H=4300 մմ: Դեկորատիվ եղնիկերի հիմքը 40X20 մմ քառանկյու մետաղական խողովակներից: Եղնիկները երսպատված են բետոնապատ պենոպլաստով, էպոքսիդով, ներկանյութով և այլն: ✓ Հատակի ծածկը երեսպատված է շուրջ 400 գծամետր դեկորատիվ լեդ լամպերով: ✓ Շուրջ 25 գծամետր 3 մմ հաստությամբ հայելապատ օրգանական ապակիով քողարկում: ✓ Շատրվանների խողովակների մշակում և ներկում ոսկեգույն ներկանյութով: • **Շատրվան 3.** ✓ Թվով 1 հատ H= 4400 մմ դեկորատիվ «Մարդուկ-Ջարդուկ»: «Մարդուկ-Ջարդուկը» երեսպատված է բետոնապատ պենոպլաստով, էպոքսիդով, ներկանյութով և այլն:					

		✓ Թվով 1 հատ H= 4000 մմ դեկորատիվ «Մարդուկ-Ջարդուկ»: «Մարդուկ-Ջարդուկը» երեսպատված է բետոնապատ պենոպլաստով, էպոքսիդով, ներկանյութով և այլն: ✓ Թվով 1 հատ H= 3000 մմ դեկորատիվ «Մարդուկ-Ջարդուկ»: «Մարդուկ-Ջարդուկը» երեսպատված է բետոնապատ պենոպլաստով, էպոքսիդով, ներկանյութով և այլն: ✓ Թվով 2 հատ H= 2100 մմ դեկորատիվ «Մարդուկ-Ջարդուկ»: «Մարդուկ-Ջարդուկը» երեսպատված է բետոնապատ պենոպլաստով, էպոքսիդով, ներկանյութով և այլն: ✓ Թվով 2 հատ H= 1700 մմ դեկորատիվ «Մարդուկ-Ջարդուկ»: «Մարդուկ-Ջարդուկը» երսպատված է բետոնապատ պենոպլաստով, էպոքսիդով, ներկանյութով և այլն: ✓ Թվով 2 հատ H= 1500 մմ դեկորատիվ «Մարդուկ-Ջարդուկ»: «Մարդուկ-Ջարդուկը» երսպատված է բետոնապատ պենոպլաստով, էպոքսիդով, ներկանյութով և այլն: ✓ Թվով 2 հատ H= 3000 մմ դեկորատիվ սյուն: Դեկորատիվ սյան հիմքը քառանկյուն մետաղական խողովակներից: Երսպատված է 3 մմ հաստությամբ հայելապատ օրգանական ապակով և դեկորատիվ լեդ լամպերով: ✓ Թվով 2 հատ H= 2500 մմ դեկորատիվ սյուն: Դեկորատիվ սյան հիմքը քառանկյուն մետաղական խողովակներից: Երսպատված է 3 մմ հաստությամբ հայելապատ օրգանական ապակով և դեկորատիվ լեդ լամպերով: ✓ Թվով 2 հատ H= 2000 մմ դեկորատիվ սյուն: Դեկորատիվ սյան հիմքը քառանկյուն մետաղական խողովակներից: Երսպատված է 3 մմ հաստությամբ հայելապատ օրգանական ապակով և դեկորատիվ լեդ լամպերով: ✓ Թվով 2 հատ H= 1500 մմ դեկորատիվ սյուն: Դեկորատիվ սյան հիմքը քառանկյուն մետաղական խողովակներից: Երսպատված է 3 մմ հաստությամբ հայելապատ օրգանական ապակով և դեկորատիվ լեդ լամպերով: ✓ Շուրջ 25 գծամետր 3 մմ հաստությամբ հայելապատ օրգանական ապակիով քողարկում: ✓ Շատրվանների խողովակների մշակում և ներկում ոսկեգույն ներկանյութով: • **Շատրվան 4.** ✓ Թվով 24 հատ Սեղան D= 600 մմ: ✓ Թվով 20 հատ բարի աթոռ: ✓ Թվով 8 հատ բնական եղևնիներ: ✓ Թվով 4 հատ Սեղան 1100X1000X2500 մմ չափի: ✓ Թվով 15 հատ լուսավորվող կամար: Կամարի հիմքը քառանկյուն մետաղական խողովակներից:					

		✓ Շուրջ 34 գծամետր նստատեղ: Նստատեղ պետք է պատրաստված լինի 18 մմ հաստությամբ նրբատախտակից: Նստատեղը պետք է լինի կարմիր գույնի ներկանյութով մշակված: ✓ Շուրջ 140քմ տախտակամած և կից աստիճաններ: Տախտակամածի հիմքը 30X30 մմ քառանկյուն մետաղական խողովակներից, իսկ երեսպատումը՝ 18 մմ հաստությամբ նրբատախտակից: Նրբատախտակը պետք է լինի լաքապատված: • Շատրվան 5. ✓ Թվով 8 հատ տարբեր չափերի դեկորատիվ պենոպլաստե տոնածառի խաղալիքներ: Առավելագույնը D= 2400 մմ, իսկ նվազագույնը D= 800 մմ: Երսպատված է բետոնապատ պենոպլաստով, էպոքսիդով, ներկանյութով և այլն: ✓ Թվով 6 հատ տարբեր չափերի լուսավորվող դեկորատիվ տոնածառի խաղալիքներ: Առավելագույնը D= 1900 մմ, իսկ նվազագույնը D= 800 մմ: Խաղալիքների իմքը քառանկյուն մետաղական խողովակներից: ✓ Շուրջ 25 գծամետր 3 մմ հաստությամբ հայելապատ օրգանական ապակիով քողարկում: ✓ Շատրվանների խողովակների մշակում և ներկում ոսկեգույն ներկանյութով: ✓ Թվով 1 հատ դեկորատիվ փոստարկղ 1200X800X900 մմ չափի: Երսպատված է բետոնապատ պենոպլաստով, էպոքսիդով, ներկանյութով և այլն: ✓ Թվով 1 հատ երկհարկանի հարթակ 2000X3000X300 մմ չափի: Հիմքը 25X25 մմ քառանկյուն մետաղական խողովակներից: Երեսպատված 18 մմ հաստությամբ նրբատախտակով և ալիկաբոնդով: ✓ Թվով 1 հատ կամար 3400X3000X200 մմ չափի: Հիմքը 25X25 մմ քառանկյուն մետաղական խողովակներից: Երեսպատված տպագրական պաստառներով, 3 մմ հաստությամբ օրգանական ապակիով և լեդ լամպերով: ✓ Թվով 8 հատ բնական եղևնիներ տարբեր չափերի՝ տոնածառի լուսերով զարդարված: ✓ Թվով 42 հատ տնակների լուսային ձևավորում լեդ լամպերով և արհեստական ճյուղերով: Շատրվանների, ծառերի էլեկտրական մոնտաժը իրականացվում է մատակարարի կողմից: Տարածքում գործող թվով 3 հատ սրճարանների քողարկում տպագրությամբ կանգնակներով շուրջ 200 քմ: Դեկորացիայի արտաքին տեսքը և գույները պետք է համապատասխան լինեն կցված էսքիզային նկարներին և պետք է նախապես, պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում համաձայնեցվեն պատվիրատուի հետ: Դեկորացիայի տեղադրումը և ապամոնտաժումը իրականացվում է մատակարարի					

		կողմից: Մոնտաժումը պետք իրականացվի ոչ ուշ քան 05.12.2022 թ.: Ապամոնտաժումը պետք է իրականացվի 14.01.2023 թ.:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012410537
ՀՎՀՀ 02593108

Ի. Օսիպյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սասնա Ծռեր 2/198
Բանկ՝ Էվոկաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1660004718200100
ՀՎՀՀ 00167818

Ռ. Տեր-Գալստյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

ՀՀ ք. ԵՐԵՎԱՆ ՍՊԸ «ՖԱԿՏՈՐԻ ՓՐՈԴԱՔՇՆ»
РА, г. ЕРЕВАН
FACTORY production
00167818
"FACTORY PRODUCTION" LLC. РА,г.ЕРЕВАН ООО "ФАКТОРИ ПРОДАКШН"

Հավելված N 2
13 դեկտեմբերի 2022թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-22/223
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*			
			հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79951110/585	Ամանորին և Սուրբծննդյան տոներին նվիրված մշակութային միջոցառումների շրջանակում, Երևանի հիմնադրման 2750-ամյակին նվիրված շատրվանների պուրակի տարածքում 2022 թվականի դեկտեմբերի 5-ից 2023 թվականի հունվարի 6-ը ներառյալ մշակութային միջոցառումների անցկացման վայրի թեմատիկ-գեղարվեստական ձևավորման ծառայություններ	-	-	115900000	**115900000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012410537
ՀՎՀՀ 02593108

Ի. Օսիպյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սասնա Ծռեր 2/198
Բանկ՝ Էվոկաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1660004718200100
ՀՎՀՀ 00167818

Ռ. Տեր-Գալստյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

ՀՀ ք. ԵՐԵՎԱՆ ՍՊԸ «ՖԱԿՏՈՐԻ ՓՐՈԴԱՔՇՆ»
RA, c. YEREVAN
FACTORY production
"FACTORY PRODUCTION" LLC. RA, c.EREVAN ООО "ФАКТОРИ ПРОДАКШН"
00167818

Հավելված 3
«   » դեկտեմբերի 2022թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-22/223
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
______________________	______________________
______________________	______________________
գտնվելու վայրը ______________	գտնվելու վայրը ______________
հհ ______________________	հհ______________________
հվհհ ______________________	հվհհ______________________

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«   » «   » 20   թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «   » «   » 20   թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
______________________	______________________
ստորագրություն	ստորագրություն
______________________	______________________
ազգանունը, անուն	ազգանունը, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » դեկտեմբերի 2022թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-22/223
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ՀՀ ք. ԵՐԵՎԱՆ ՍՊԸ «ՖԱԿՏՈՐԻ ՓՐՈԴԱՔՇՆ»
FACTORY
RA, c. YEREVAN
00167818
"FACTORY PRODUCTION" LLC. РА г.ЕРЕВАН ООО "ФАКТОРИ ПРОДАКШН"

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն